*զմոգս կալեալ եդ ի բանտի։ Նաև զօրք սոցին ի յարևելս աւերեցեալք և կոտորեցեալք ասին, բայց թէ ուստի, ոչ լսի։ Նաև գերեզմանատեղ սուտ մարգարէին առեցեալ գոլ ասի։ Նաև ի Մարաց աշխարհն գլուխ մի բարձրացեալ խմբօք, աւերեալ և գերեալ զայն աշխարհն։ Եւ բազում նեղութիւն ունին անատօլցիք և արևելեանք ենթ տէրութեան սոցին եղեալքն։...*

*Գերյարգութեան քում, Թևամ պատրաստական ծառայ ամենայնի*

*Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի*

1726 Սեպ. 1. *ի Կոստանդնուպոլիս*

*գիր* — 12

*(Շարունակելի)*

Հ. Ղ. ՏԱՑԵԱՆ

---

# ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿ ԱՄՍԱԹԵՐԹԻՍ

## Եւ 1918-ի "ԲԱԶՄԱՎԷՊ"ը

*Խմբագրութիւնս պատիւ ունի ծանուցանելու Հանրութեան, որ* 1923-*ի Յունուարը իր հետ կը բերէ* ‹‹ԲԱԶՄԱՎԷՊ››*ի գոյութեան ութսուներորդ տարին։*

*Այս առթիւ լոյս կը տեսնէ քիչ ատենէն առանձին պատկերազարդ հատորի մը մէջ և իր բնիկ տարազով՝* 1918-*ի* ‹‹ԲԱԶՄԱՎԷՊ››*ը, որ պատերազմի ժամանակ Վենետկոյ մէկ բազմավտանգ րոպէին՝ ստիպուած էր դադրիլ ամբողջ տարի մը, լռած ըլլալով Ս. Ղազարու մամուլը։*

*Ուրեմն կ'ամբողջանայ այն թիւով անոր ութսունամեայ գործունէութեան մէջ մնացած այդ կարևոր պակասը։*

*Բովանդակութիւնը պիտի ծանուցուի՝ այն ինչ աւարտի տպագրութիւնը։*

ԱՌԱՆՁԻՆ *բաժանորդագրութիւն պիտի բացուի այս հետաքրքրական և յոյժ կարևոր* ‹‹ԲԱԶՄԱՎԷՊ››*ին համար, ու պիտի առաքուի մի միայն անոնց՝ որոնք կը պատասխանեն մեր ազդին - զոր յաջորդիւ պիտի դնենք - ղրկելով կանխիկ բաժնեգինը խմբագրութեանս հասցէին, որ է*

Rédaction de la Revue «PAZMAVEB»

**S. Lazare** **VENISE**

(Italie)

digitised by A.R.A.R.@